ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2025թ. թիվ 827-Ա

Լ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1) կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ և 39-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 2-ի՝ ՀՀ Լոռու մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 478 արձանագրությունը և հաշվի առնելով Լ.Նահապետյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լենա Գուրգենի Նահապետյանին 2025 թվականի դեկտեմբերի 17-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ մեկ տարի փորձաշրջանով:

2. Լենա Նահապետյանի փորձաշրջանի համակարգող նշանակել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աղասի Թովմասյանին:

3. Լ.Նահապետյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

4. «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լենա Նահապետյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի գնահատմանը ներկայացնել ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի 1 տարվա կատարողական հաշվետվությունը:

5. Փորձաշրջանի ղեկավար Աղասի Թովմասյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

17 դեկտեմբերի 2025թ.
ք.Վանաձոր